

ՀԱԿՈՒ ԿԼԱՅԵՑԻՆ ԼՈՒԿԱՅՈՒՄ

Պրոֆ. ԶԻՆՈ ԱՐՐԻԳԻ (Իտալիա)

Լուկկայի մայր տաճարի՝ Ս. Մարտին եկեղեցու գլխավոր մուտքի մոտ պտնվող մի արձանագրություն վկայում է, որ XIII դարի առաջին քառորդում ավարտվում էր նրա գավիթը. „Hoc opus cepit fieri a Belenato et Aldibrando operariis A. D. MCCXXXIII“.

Ջարդաքանդակների նախագծի համար, ի միջի այլոց, առաջ են քաշում Նիկոլա Պիդանոյի անունը, որն այստեղ թողել է հիանալի խորաքանդակներ, և գտնում են, որ վերահիշյալ երկու վարպետները (operarii) քանդակագործներ էին, կամ, ինչպես այն ժամանակ էին ասում, քարի վարպետներ:

Հիշյալ գավթում, գլխավոր մուտքի բարձր մասի մոտ, զանգակատանն ավելի մոտիկ, քարերից մեկի վրա բոլորածև սև խորքի վրա պատկերված է հավասարաթև սպիտակ խաչ (նրա յուրաքանչյուր անկյունում՝ մեկական փոքրիկ խաչով) և ներքևում՝ հալերեն տառերով մի արձանագրություն:

Լուկկացի շատ գիտուն բժիշկ Ֆրանչեսկո Մարիա Ֆիորենտինին (1603—1673), որի հետազոտական և ուսումնասիրական գործունեությունն ընդգրկում էր բազմաթիվ բնագավառներ¹, այսպես է գրում. «Եվ ինձ առիթ է ներկայանում ասելու, որ հնագետները Լուկկայի մայր տաճարի գավթում մատնադուլց են արել հետևյալ արձանագրությունը, որը դեռ պահպանված է նրա ձախակողմյան մասում, սակայն... թող ինձ չհարցնեն, թե ինչ է նրա բովանդակությունը²: Եվ նա բերում է հիշյալ քարի գծագրությունը: Բայց մինչև աշխատության վերջին էջերի տպագրումը, կասկածն արդեն փարատվել էր, քանի որ ամենակարևոր ուղղումների ցանկում կարգում ենք. „Libro 3-o. 60 nel finir la pagina aggiungasi al luogo delle allegationi. Carac-teres Armenti e regione positi interpretantur. Iacobus de Glaegh facite commemorationem overo Iacobus Glaecha mementote“³: Ո՞վ էր օգնել նրան այդ ժամանակամիջոցում: Ամեն ինչ պարզվեց Աստվածամոր անվան միաբանության անդամ, լուկկացի հայր Բպոլիտ Մարսեչիի (1604—1675) մի անտիպ նամակից՝ ուղղված Ֆ. Մ. Ֆիորենտինին, որը ես գտել եմ Լուկկայի

¹ Sfr. Giovanni Sforza, Di Francesco Maria Fiorentini. Lucca, 1879. Gino Arrighi, Un galileiano lucchese. Francesco Maria Fiorentini. Firenze, 1960.

² Francesco Maria Fiorentini, Memorie di Matilda la gran contessa. Lucca, 1642, t. III, էջ 60.

³ Ibidem, էջ 70.

⁴ Federico Sarteschi, De scriptoribus Congregationis Clericorum Matris Dei. Romae, 1753, էջ 133; Cesare Lucchesini, Della storia letteraria del ducato Lucchese. Lucca, 1831, էջ 16 և 19.

գրադարաններից մեկում (Biblioteca Governativa)⁵: Հռչակավոր լեզվաբանը գրում էր.

«Մեծարգո և մեծապատիվ Տեր,

Քաղաղություն ի Քրիստոս: Գիրքը իսկույն հանձնեցի ար. Անդրեաս Կալցոլարոյին... Ինձ ուղարկված գրերը հայերեն են, որոնք թարգմանվեցին



Նկ. 1. Լուսկայի Ս. Մարտինոս եկեղեցու հայերեն արձանագրությունը

Թե՛ Հիսուսյան ընկերության անդամ հայր Աթանաս Կիրիսեր ֆուլբեղե Բուկոնիկոյի կողմից՝ Iacobus de Glaegh facite commemorationem pro eo և Թե՛ Ս. Մարիամ Եգիպտացու եկեղեցում բնակվող մի հայ արեղայի կողմից՝ Iacobus Glaecha mementote: Վերջինս ասաց, որ Glaecha-ն Վերին Հայքի գլխավոր քաղաքներից է, հիշյալ Հակոբի ծննդավայրը...:

Մնամ Ձեր հրամանին և աղոթքներին:


Հում, 3 օգոստոսի 1641 թ.:

Ձերդ Մեծարգություն և Մեծապատվություն ծառա ի Քրիստոս, Իպոլիտ Մարաչչի»:

⁵ ՁԼ՝. № 1260: „Lettere di Uomini Dotti Scienziati Letterati a Francesco M. ai Fiorentini“.

Հաշվի առնելով, որ մի այլ լուկիացի՝ Բոնաֆեդեն կամ Բուոնաֆեդեն, պատկանել է վերոհիշյալ միաբանություններ և հետագայում անցել Օդոստինյաններին⁶, ևս նկատում եմ, որ, ըստ երևույթին, հայերեն արձանագրություն թարգմանություններին աղբյուր ծառայած այս նամակը կրում է նրա ձևքով կատարված հետևյալ մակագրությունը. «Aggregata alla Iscrizione di Beatrice A. D.^a. Հայ արեղան և Աթանաս Կիրիսերը, որն արդեն այս շրջանում ուներ մի քանի ապագրված աշխատություններ, ուր երևում է լեզվարանի նրա տաղանդը, այդպիսով օգնել էին ֆիորենտինին»:

di Toscana, che longamente vi risederno . E già che mi si porge occasione, habbianſi gli antiquarij la ſeguente memoria nell'atrio del Duomo Luccheſe a man ſiniſtra tuttauiſa conſeruata , con queſta conditione però, che tutto che quel maeftoſo tempio viuente Matilda ſi fabricaſſe, a me non ne dimandino il ſignificato .



ՈՅՎԿՈՒԿԱՆ
ՇԵՆՅԷԷՇԷԷ

Նկ. 2. Լուկայի հայերեն արձանագրությունը
Գծագրություն՝ արտատպված Ֆ. Մ. Ֆիորենտինիի մի աշխատությունից

Լուկիան հնուց անտի գտնվում է այն ճանապարհին, որով անցնում էին ուխտավորները, այդ թվում նաև հայեր: Ըստ մի հին «Վարք»-ի (Vita)⁷, մենք գիտենք Ս. Սիմեոնի մասին՝ «in partibus natus Armeniae», որը Լուկայում է եղել 1000 թ. հենց առաջին օրերին և 1016 թ. հուլիսի 26-ին մեռել է Պոլիրոնների Ս. Բենեդիկտոսի վանքում, Մանտուայի մոտ: Ս. Դավիթը, որի մասին «Վկայարանություններում» (Acta)⁸ ասված է, թե «Armeniae partibus extit oriundus», իր կյանքի վերջին շրջանն անցկացրել է Լուկայում և աճյունեց

⁶ F. Sarteschi, cit., էջ 14; Lucchesini, cit., էջ 23 և 93:

⁷ «Acta Sanctorum», Venetiis, t. IV, 1749, էջ 324 — «Auctore monacho Padolironensi anonymo et coaevo ex codice Ms. Ingolstadiensi, collato cum alio Ms. et editis exemplaribus».

⁸ Ibidem, t. I, 1741, էջ 329 — «Auctore Anonymo supparis aevi, ex Ms. Basilicae Lateranensis, Luca Romam allato».

մահացել 1050 թ. հունիսի 3-ին: Դժվար չէ նաև կռահել, որ նրանց ներկայությունն ալստեղ Վոլտո Սանտոյի» (Volto Santo) ասիթով էր, որը լուկաացիներն ըստ սովորության տոնում են ամեն տարի սեպտեմբերի 14-ին, այսինքն՝ Սաչվերացին, որը հայերի համար ևս հնում եղել է այնպիսի կարևոր տոն, որ տևում էր նույնիսկ յոթ օր⁹: Վերոհիշյալ Հակոբի մահից հետո էլ մենք հանդիպում ենք հայ արեղաների, որոնք իրենց բնակությունն են հաստատել Լուկայում. բալց, անշուշտ, այդ չէ իմ հետաքրքրության առարկան:

Այժմ հարց է ծագում. ո՞վ է վերոհիշյալ անձնավորությունը, որ արձանագրության միջոցով ցանկանում է հիշատակության արժանանալ հետագա սերունդների կողմից:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ պրոֆ. Ս. Տ. Երևմյանը գտնում է, որ մեզ հետաքրքրող Հակոբին կարելի է նույնացնել համանուն առաջին կաթողիկոսի՝ Հակոբ Գլայեցու հետ, որը հայ եկեղեցու հայրապետական աթոռն է գրավել Հռոմիլա քաղաքում: Նա հայոց կաթողիկոս է եղել 1268 թ. փետրվարի 12-ից մինչև 1286 թ. փետրվարի 12-ը¹⁰:

Կլայեցի բառը նշանակում «Կլայ անվանված վայրից»: Արարական ծագում ունեցող Կլայ (כלע) բառը նշանակում է «բերդ», «ամրություն»: Կիրիկյան Հայաստանի պատմության մեջ (XI—XIV դդ.) Կլայեցի են կոչվել այն անձինք, որոնք Հռոմիլա բերդաքաղաքից էին կամ իրենց հասարակական գործունեությունը ծավալել են ա՛յդ քաղաքում, ինչպես XIII դարի հայ նշանավոր մատենագիր Երեսե Շնորհալին, որը կոչվում է և Ներսես Գլայեցի: Բառի սկզբի հայերեն կ տառը, որ արևելյան հայերի մոտ (նրանց, որոնք ապրում են Հայկական սեպտեմբերի սահմաններում և Պարսկաստանում) հնչվում է k, արևմտյան հայերի (Թուրքիայի հայերի և զաղութահայերի) մոտ հնչվում է g: Այդ պատճառով Iacob-ին հաջորդող բառը կարող է արտասանվել և՛ Klaetsi, որն ավելի դասական է, և՛ Glaetsl, որը համապատասխանում է Աթանաս Կիրիսերի և հայ արեղայի կողմից տրված Glaegh, Glaecha ձևերին:

Հայ պատմական աղբյուրներում օգտագործվում են այդ քաղաքի անվան տարրեր ձևեր՝ «Հռոմիլայ», «Գլայ Հռոմիական» (բյուզանդական ամրոց), «Գլայ Հռոմեական» (հռոմեական ամրոց): Դա հայկական մի բերդաքաղաք էր, որը 1147 թ. սկսած միառժամանակ եղել է ամենայն հայոց կաթողիկոսների աթոռանիստը: Պատմաբան հ. Մ. Չամչյանը նրա մասին գրում է, որ «էր ամրոց անառիկ, շինեալ ի վաղ ժամանակաց յկող Եփրատ գետոյ-գորոյ գերկուսին կողմանս պատէր Մարդման գետն՝ իջեալ յԵփրատ. և էր յառաջմէ այս դղեակ ի ձեռս Իող Վասլի իշխանին Հայոց. ալ յայնմ ժամանակի (1147 թ.) անկեալ էր ի ձեռս Լատինացւոց, և էր ընդ իշխանութեամբ Թիմոթէ կոմսին Ճոսլինայ», որի բարձրացականության շնորհիվ հայոց Գրիգոր Ի Պահլավունի կաթողիկոսը հաստատում է այնտեղ իր աթոռը և քիչ հետո էլ գնում է գլխավոր նրա որդուց¹¹: Ըստ Մ. Օրմանյանի՝ հայրապետական

⁹ P. Vardan Hatzuni, Cenno storico e culturale sulla Nazione Armena. Venezia, 1940, էջ 62:

¹⁰ Նրա կաթողիկոսության պատմության մասին տես Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. I, Կ. Պոլիս, 1914, էջ 1673—1698:

¹¹ Հ. Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 71:

դահի հաստատումը Հոռմկլայում պետք է տեղի ունեցած լինի 1149 թ.¹²։ Հոռմկլան եղավ հայոց կաթողիկոսների աթոռանիստը մինչև 1293 թ., երբ Եղիպատոսի սուլթան Աշրաֆը գրավեց այն և ավերեց։ Այդ քաղաքի այժմյան անունն է Ռում-Վալա։

Սուքիաս Սոմալը գրում է. «Կոնստանդին Ա-ի մահից հետո Հայաստանի կաթողիկոսական աթոռը թափուր մնալով, 1268 թ., որպես հաջորդ կաթողիկոս ընտրվեց Հակոբ Ա-ը, ծնված Տարսոնում, կամ, ըստ ոմանց, Սիսում։ Հայերը նրան անվանեցին «Կլայեցի», նաև «Իմաստուն», «գիտուն», որովհետև երբ դեռ սոսկ եպիսկոպոս էր, վերոհիշյալ կաթողիկոս Կոնստանդին Ա-ի և Հեթում Ա թագավորի կողմից ուղարկվեց Կոնստանդնուպոլիս՝ ներկա դռնվելու հույն եպիսկոպոսների ժողովին, որտեղ նա շատ փայլուն և արդյունավետ ճան արտասանեց հույների կողմից թյուր հասկացված աղղային որոշ հարցերի մասին. դա պարզ ցույց է տալիս, որ նա եղել է ոչ միջակ տաղանդ և շատ հմուտ է եղել զրականություն և լեզուների մեջ։ Աղետավոր ժամանակներում 18 տարի հայկական եկեղեցին հույթ արժանագովությունը վարելուց հետո վախճանվեց 1286 թ. և մեզ թողեց հետևյալ զրական աշխատությունները. 1. Մի շրջաբերական թուղթ, որին ուղեկցում էր Գնորհալի Կլայեցու արդեն հիշված շրջաբերական թուղթը (1166 թվականից). 2. Մի շարք մեկնություններ Ս. Գրքի զանազան մասերի ու խոսքերի մասին, ինչպես և եկեղեցական հայրերի գործերի մասին. 3. Բացառիկորեն անուշ ու հույսկապ մի շարական, որը դեռ երգվում է Ս. Կույս Մարիամի ծննդյան տոնի օրը»¹³։

Հայ ժամանակագիր Սամուել Անեցին նրան անվանում է «գիտնական»¹⁴, իսկ հայ պատմագիր Վահրամ Բարունին՝ «հսկող»¹⁵։ Ք. Պատկանյանը գրում է նրա երկերի մասին. «Հակոբ Ա Կլայեցի, կաթողիկոս 1268—1287 թթ. 1. Հովվական կոնդակ (Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի ձեռագիր)։ 2. Սուրբ Գրքի զանազան մասերի մեկնություն (Վեն. Մխիթ. Մատ. ձեռ.). 3. Ս. Կույսի ծննդյան նվիրված շարական»¹⁶։

Հակոբ Կլայեցու կաթողիկոսության ժամանակ տեղի ունեցավ Լուզդոնի (Լիոնի) երկրորդ տիեզերական ժողովը, որը տևեց 1274 թ. մայիսի 7-ից մինչև հուլիսի 17-ը և գլխավորապես հետևյալ երեք նպատակներն ունեւ. հունական եկեղեցու միացումը լատինականի հետ, Սաչակրաց արշավանքը դեպի Սուրբ Երկիր, կղերական հարցերի բարենորոգում։ Գրեթե X պապը 1274 թ. ապրիլի 27-ին Ռուբինյան հարստության թագավոր Լեոն III-ին ուղարկել էր հետևյալ նամակը.

¹² Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1375։

¹³ P. S. Somal, Quadro della storia letteraria di Armenia. Venezia, 1829, էջ 14։ Հմմտ. նաև C. F. Neumann, Versuch einer Geschichte der armenischen Literatur. Leipzig, 1836, էջ 191։

¹⁴ Սամուել Անեցի, Հաւաքմունքի դրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 151։

¹⁵ Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 1859, էջ 227։

¹⁶ M. Patcanian, Catalogue de la litterature armenienne, Melanges Asiatiques, tires du Bulletin de l'Academie Imperiale des Sciences de St.-Petersbourg. t. IV, 1860—1863, էջ 118։

«Գրիգորիոս Լպիսկոպոս՝ Աստուծո ծառաների ծառան, իր ամենասիրելի որդուն... Հայաստանի ականավոր թագավորին ողջուն և առաքելական օրհնություն:

Աստվածաշին անվան փառաբանության [համար], և քրիստոնեական կրոնի բարգավաճ գրության համար, ինչպես նաև Սուրբ Երկրի գործի օգտին, եկեղեցական ընդհանուր ժողով ենք հրավիրում առաջիկա մայիս ամսվա կալենդներից սկսած մոտավորապես մեկ տարի անց, Լուզգոն (Լիոն) քաղաքի մոտ, որը պետք է նշանավորվի աստվածաշին ողորմածության օգնությամբ, և դու, ինչպես համայն կաթողիկ աշխարհի մյուս բոլոր թագավորները, հրավիրվում ես [այս ժողովին] մեր այլ նամակի միջոցով: Քանի որ հույժ անհրաժեշտ է այդ ժողովի գործունեության ընթացքում ունենալ նաև եկեղեցական վաղեմի ժողովների գործերն ամբողջությամբ, քո Արքայական Մեծությունից խնդրում ենք և նրանից սպասում ենք Նիկիայի ժողովի [գործերը] ամբողջությամբ, ինչպես նաև այլ ժողովների [գործերը, նշվածները], որոնք, ասում են, թե դու ունես հայերենով, [սպասում ենք] մի քանի հմուտ թարգմանիչների հետ միասին, որոնք հայերենից կթարգմանեն լատիներենի: Արան կից՝ մեր հարգարժան եղբորը... կաթողիկոսին նույնաման նամակ ենք հղում: Մեզ կհաղորդես [այդ նշվածները] ըստ կարելիության արագ, որպեսզի եկեղեցական այդ նույն ժողովներում կատարված օգտակար գործերը [մեզ] լինեն ուղեցույց, և Մենք թագավորական բարեպաշտության նշանը հանդիսացող արագությունը կպարտավորվենք զրվատել որպես Աստուծո գովեստի արժանի:

Տրված է Հին Քաղաքից, մայիս ամսվա կալենդների V օրը, մեր քահանայապետության երկրորդ տարում»¹⁷:

Բացահայտ աղերս կա այս նամակի և մեզ հետաքրքրող Հակոբի միջև: Բայց Գլաչեցին իսկապես՝ մասնակցել է ժողովին:

Ասում են, որ «Հակոբ Ա-ը մերժեց, անհայտ է, թե ի՞նչ գրգապատճառներով, ներկայանալ Լուզգոնի ժողովին»¹⁸: Պատմական մի տեղեկության

¹⁷ „Gregorius Episcopus servus servorum Dei, carissimo filio... Regi Armeniae illustri salutem et apostolicam benedictionem. Ad laudem divini nominis, et statum prosperum Christianae religionis, nec non pro Terrae Sanctae negotio, indiximus generale Concilium, a Kalendis instantis mensis Maij ad unum annum apud civitatem Lugdunensem, divina favente clementia celebrandum, ad quod sicut ceteri reges, Orbis terrae Catholici, per alias nostras literas invitatis. Quia vero multipliciter expedit, ut in ejusdem celebratione Concilii antiquorum Conciliorum copiam habeamus, Celsitudinem Regiam rogamus, et hortamur attente, quatenus integrum Nicaenum Concilium, et alia Concilia, quae habere diceris in Armenica litera, cum aliquibus peritis interpretibus, qui de Armenico transferant in Latinum: super quo venerabili fratri nostro... Catholico similia nostra scripta dirigimus; Nobis cum ea, qua poteris, celeritate transmittas, ut in iis, quae facienda fuerint per eadem Concilia salubris haberi possit instructio, et Nos regalis devotionis promptitudinem exinde commendare dignis in Domino laudibus merito debeamus. Dat. Urbeveteri V. Kal. Maji Pontificatus nostri anno secundo“. Տե՛ս „Sacrorum Conciliorum nova et amplissima collectio“ etc., Venetiis, 1780, t. XXIV, col. 59: „Ejusdem epistula ad Armeniae Regem Eum ad Concilium Lugduni celebrandum invitat, et ut antiquorum Conciliorum exemplaria secum deferat“.

¹⁸ „Dictionnaire de Theologie Catholique“, t. II, Paris, 1903, col. 1904.

Համաձայն, Լեոն III թագավորն ուղարկել էր իր ներկայացուցիչներին¹⁹, թեպետ Մ. Օրմանյանը հավանական չի դանում այդ հանգամանքը²⁰: Գուցե զժվար լինի ապացուցել, թե Հակոբ Կլայեցի կաթողիկոսը իրոք գնացել է այդ ժողովին և իր ճանապարհորդության ընթացքում այցելել Լուկիա քաղաքը: Այնուամենայնիվ, կարելի է հաշվի առնել Մ. Օրմանյանի արած դիտողությունը, բայց որի, հալ պատմական աղբյուրները լուծյուն են պահպանում Հակոբ Կլայեցու այդ ժամանակաշրջանի դործունեության վերաբերյալ: Նմանապես ոչ մի տեղեկություն չկա նրա կյանքի վերջին տարիների մասին, ուստի հայտնի չէ, թե նա որտեղ է վախճանվել և ե՞րբ²¹:

Արդ՝ Լուկիան ե՞րբ է տեղ գրավել Հակոբ Կլայեցու կյանքում: Ես չեմ համարձակվում ենթադրություն անել նրա մահվան ժամանակի վերաբերյալ: Բայց կուզենա՞ի կանգ առնել Լիոնի տիեզերական ժողովի ժամանակի վրա, ժողով, որին մասնակցեց Լուկիայի եպիսկոպոս զոմինիկյան Պետրոս Անօհորելլին:

Ձևալած վերևում շարադրված պատմական կատածներին, շահեկան է մնում հալ դիտուն կաթողիկոսի Լուկայում թողած հիշատակը:

Նախքան այս հոդվածն ավարտելը, ես իմ ջերմ շնորհակալությունն եմ հայտնում պրոֆ. Ս. Տ. Երեմյանին՝ ինձ ցույց տված օգնության և հայերեն աշխատություններից ինձ տրամադրած տեղեկությունների համար:

АКОП КЛАЙЕЦИ В ГОРОДЕ ЛУККА

Проф. ДЖИНО АРРИГИ (Италия)

(Р е з ю м е)

Мы останавливаемся на армянской надписи в соборной церкви св. Мартина в городе Лукка (Италия) и на всех обстоятельствах, относящихся к возникновению этой надписи. Устанавливается, что личность, упомянутая в надписи, идентична армянскому католикосу Акопу Клайеци (1268—1286).

Лукка находился на пути, по которому шли в Рим пилигримы, в том числе и армяне. Первые свидетельства о пребывании армянских духовных лиц в г. Лукка восходят к началу XI в. Акоп Клайеци резидировал в Ром-клай, который являлся хорошо укрепленным замком и был местопребыванием армянских патриархов с 1149 по 1293 г., когда замок был захвачен и уничтожен египетским султаном Ашрафом.

Католикос Акоп Клайеци, родом из Тарсона, а по мнению других — из Сиса, известен как автор нескольких сочинений по богословским вопросам. Мы показываем, что Акоп Клайеци находился в Лукка в период Вто-

¹⁹ Հ. Ղ. Ալիշան, Սրբուհի, Վենետիկ, 1885, էջ 555:

²⁰ Մ. Օրմանյան, Նշվ. աշխ., հատ. Բ, էջ 1684:

²¹ Նույն տեղում, էջ 1691:

рого Лионского Вселенского собора, который заседал в 1274 г., с 7 мая по 17 июля.

В связи с этим приводится текст послания папы Григория X армянскому царю Левону III. Может быть, католикос Акоп Клайеци действительно отправился в Лион для участия в соборе и по пути остановился в Лукка. Однако армянские источники хранят молчание о деятельности Клайеци в этот период, и у нас нет сведений о последних годах его жизни и о том, где и когда он умер. Несмотря на эти неясности, все же обращает на себя внимание тот факт, что армянский католикос оставил память о себе в г. Лукка.